911 Արտակարգ թերթ

N 29 (677)
28.07-24.08 2017

ISSN 1829-149X

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENSY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Փախստականներին

Աջակցության օրենքի նախագիծ

ԱՄՆ ներկայացուցիչների պալատի բյուջետային կոմիտեն ընդունել է օրենքի նախագիծ, ըստ որի՝ նախատեսվում է 47,4 մլրդ դոլար հատկացնել սիրիացի փախստականներին ապաստանած երկրներին: Նախատեսվում է նաև օգնություն հատկացնել Սիրիայում ապրող քրիստոնյա փոքրամասնությանը: Եթե օրենքի նախագիծը հաստատվի, մեր երկրում ապաստանած սիրիահայերը նույնպես կարող են օգտվել այդ օգնությունից: Պատերազմից ի վեր Հայաստանն ընդունել է 22 հազար սիրիահայի: Մինչև պատերազմը Սիրիայում ապրում էր 120 հազար հայ, որից 50-ը՝ Հալեպում:

Լինենք ուժեղ

ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Ռուսաստանում անցկացվում է «Միջազգային բանակային խաղեր-2017» ստուգատեսը, որին կմասնակցեն նաև ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները: Մոսկվայում, Նովոսիբիրսկում և Տյումենում անցկացվելիք «Տանկային բիաթլոն», «Զորային հետախուզության գերազանցիկներ» և «Անվտանգ երթուղի» մրցումներին կմասնակցեն ՀՀ ԶՈՒ տանկային, հետախուզական և ինժեներական ստորաբաժանումները, իսկ Ղազախստանի Ալմաթի քաղաքում կայանալիք «Դիպուկահարների սահմանագիծ» մրցույթին՝ 11 դիպուկահար:

Եվս 5 զինծառայող ՀՀ զինված ուժերը կներկայացնեն Բելառուսում անցկացվող «Ընկերակցության զինվոր» մրցույթին: ■

Լուսանկարը՝ https://www.yerevan.am

Մաքուր Հայրենիք

ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարդավառը Երևանում ոչ ոքի անտարբեր չթողեց: Ջրով լի դույլերով զինվել էին նաև օտարերկրացիները (նկարում): Տեսե՛ք, ինչ տագնապ կա տղամարդու երեսին: Երևի կարծել էին, թե զերծ կմնան ջրաշիթերից: Բայց՝ չէ: Նրան էլ ջրեցին, կնոջն էլ: Ու այնքան, որ թրջվեցին մինչև վերջին թելը: Չէին սպասում: Ու հիմա հսկայական դույլով, կարծես, դարանակալել է, մինչև ջրվելը իր նման միամիտ մեկին մի լավ թրջելու համար: Երևանյան խշխիշ օդից նրա մարմինը հովացել է, բայց արի ու տես, որ հրճվող սիրտը «վրեժ» է ուզում:

Իմ տպավորությամբ, Վարդավառը երբեք այսքան ջրառատ չէր եղել: Արևի շողերից ջուրն օդում խայտուն ալիքներ էր տալիս և ուրախ ցնծություն պատճառում ջրադույլերով վխտացող եռուն ջրախաղին: Ու Պայծառակերպության տոնին կերպափոխություն էր իջել բոլորի վրա՝ օտար թե յուրային դարձել էին երկրային ու երկնային պայծառատես էակներ, որոնք հայացքով կարող էին տիեզերքի անհունները թրատել:

Թերևս, միակն ենք մենք աշխարհում, որ Վարդավառի նման տոն ունենք:

Եվ միակն ենք, որ ջուրն այդպես փառաբանել գիտենք: Ի՞նչն է շատ մեր լեռնաշխարհում՝ ջուրը: Ու նաև ջուրն անարժեք համարելուն ենք սովոր: Աշխարհի և ոչ մի կետում էժան ապրանքին չեն ասում՝ ջրի գին: Մենք ասում ենք: Ի՞նչ է ստացվում՝ մեկ փառաբանում ենք ջուրը, մեկ անարժևորո՞ւմ այն: Երևի իրանցի օտարն էլ տարակուսած՝ այդպես է մտածում մեր մասին: Գուցե նրա հայացքում արտահայտված տագնապի պատճառը նաև դա՞ է: Չ՞է որ իրենց երկրում՝ քյարիզներում հոսող ջուրը սակավ է:

Մենք գիտենք ջրի զորությունը: Ջրառատ մեր երկրում ջրի պակասը կա: Ու հողը ջրով արբեցնելու արդյունքով է մեր կերպն այսպիսին: Քարից հաց քամել սովորել ենք ջրից: Ջրի կաթիլը մեզ համար ծովի արժեքն ունի: Մաքրության արժեք:

Այս Վարդավառից, կարծես, կերպափոխվում է նաև Հայաստանը: Հուլիսի 29-ին երկրորդ համապետական շաբաթօրյակն է՝ «Մաքուր Հայաստան» ծրագրի ընթացքով: Մաքրությունը միայն ջրով չէ, այլ դրա նկատմամբ բծախնդիր մարդու կերպափոխությամբ: Սահմանվում են մաքրաբարոյության հստակ կանոններ, Վարչական իրավախախտումների նոր օրենսգրքում անմաքրության դեմ կիրառվելու են տուգանքներ, կանխարգելման միջոցառումներ, որին սպասում էինք վաղուց: Միջավայրն աղտոտելու համար սահմանվելու է նվազագույնը 16 հազար դրամ տուգանք, խոշոր ձեռնարկությունների համար տույժը հասնելու է մինչև 200-300 հազար դրամի: Սակայն կարծիք կա, որ տուգանքների չափը շատ ավելին պետք է լիներ:

Մարդկային կերպափոխությունը, ցավոք, միայն դաստիարակությամբ չէ, նաև օրենքի ուժով է: Մենք գրել ենք. Թբիլիսիում ծխախոտի կոթուկը նետելու համար հետիոտնը տուգանվում է մոտ 32 դոլարով: Տուգանվում են նաև փողոցն աղտոտած կենդանիների տերերը: Այնտեղ մաքրությունը տեսուչներն են հսկելու՝ լուսանկարչական ապարատներով: Իսկ թե մեզ մոտ ովքե՞ր են հետևելու օրենքի կատարմանը, դեռև հստակ չէ:

Այսօր շատ բան է փոխվել Երևանում: Հիացմունքի է արժանի հոծ մարդկանց բազմությունը՝ լուսացույցի կանաչին սպասելիս: Նոր ժամանակների նվաճումն է դա: Մարդիկ դանդաղ, բայց սերտեցին անվտանգության կանոնները:

Ջուրը փառաբանող, կենարար այդ հեղուկը կերպափոխության խորհրդանիշ համարող մենք կունենաք նաև մաքուր Հայրենիք:

Բավական չէ՞, ինչքան նախանձով հիացանք այլ երկրների մարդկանց մաքրաբարոյությամբ: ■

Գագիկ ԵՂՅԱՆ

Կարևոր

ՀՈՒՆԻՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ

էջ 3

ՓՐԿԱՐԱՐԸ ՄԱՐԴՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ Է

էջ 4

ԳԻՐ ԳՐԻ ՎՐԱ

էջ 6

ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՄԱՍՈՒՆԻ

էջ 7

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Գնահատանք

«Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության պետ Հրաչյա Պետրոսյանը՝ պաշտոնը զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու հիմքով ազատվել է աշխատանքից: Նախարար Դավիթ Տոնոյանը, բարձր գնահատելով Հրաչյա Պետրոսյանի աշխատանքը սեյսմիկ պաշտպանության համակարգի ձևավորման գործում, նրան պարգևատրել է ՀՀ ԱԻՆ «Փառքի խաչ Նոյ» մեդալով և ՀՀ ԱԻՆ շնորհակալագրով:

ԸՆԹ ԱԻՆ
2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Արտակարգ իրավիճակներում և ճգնաժամերի ժամանակ ռազմական ու քաղաքացիական կառույցների համագործակցությանն աջակցելու, փրկարարների պատրաստվածության բարձրացմանն ու կարողությունների հզորացմանն օժանդակելու հարցերում Հայաստան-ԱՄՆ Կանզաս նահանգ համագործակցությունը սկսվել է 14 տարի առաջ՝ 2003 թվականին: ԱՄՆ Կանզասի ազգային գվարդիայի պատվիրակությունը բազմիցս եղել է Հայաստանում՝ մի անգամ Կանզասի փոխնահանգապետ Ջեֆ Կոլիերի գլխավորությամբ, հիմնականում Կանզասի ազգային գվարդիայի հրամանատար, ադյուտանտ-գեներալ Լի Տաֆանելի գլխավորությամբ: Այս օրերին կրկին Հայաստանում է Կանզասի ազգային գվարդիայի պատվիրակությունը՝ Լի Թաֆանելիի գլխավորությամբ: Ամերիկացի գործընկերների հետ հանդիպման ժամանակ Հայաստանի ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանն ասել է, որ միջազգային համագործակցությունը նպաստում է փրկարարական ուժերի կարողությունների հզորացմանը:

Հանդիպումների ժամանակ քննակվում են տարբեր հարցեր. շինությունների ինժեներական աջակցություն, սեյսմիկ պաշտպանություն, «911» ծառայության կատարելագործում, երիտասարդ մասնագետների վերապատրաստում, տեխնիկական օգնություն, նաև համատեղ վարժանքներ են իրականացվել: Այս տարվա հուլիսի 18-28-ը Կանզասի ազգային գվարդիայի և Միացյալ Թագավորության 6-րդ գումարտակի փորձագետները Հայաստանում առաջին օգնության, կենսապահովման հիմունքների և վտանգավոր նյութերի հետ աշխատանքի թեմաներով դասընթացներ են անցկացրել, իսկ հուլիսի 27-ին և 28-ին Շիրակի մարզի Ախուրյան քաղաքի հրշեջ-փրկարարական ջոկատի վարժահրապարակում և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գործնական պարապմունքների «Լուսակերտ» բազայում հայ-ամերիկյան համատեղ վարժանքներ են անցկացվել, որոնց ներկա են եղել Դավիթ Տոնոյանն ու Լի Թաֆանելին:

Կանզասի ազգային գվարդիայի պատվիրակությունը պատրաստակամ է համագործակցել և իր փորձով օգնել Հայաստանին նաև համայնքներում վաղ ազդարարման համակարգերի զարգացման, բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացման, աղետների ու ճգնաժամերի ընթացքում փրկարարական ուժերի կառավարման մեթոդաբանության կատարելագործման հարցերում: ■

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Հուլիսի 26-ին նախարար Դավիթ Տոնոյանը, նախարարության փրկարար ծառայության ղեկավար կազմի ներկայացուցիչներն ու Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրերի քաղաքականության և ծրագրերի աջակցության գրասենյակի Կայուն զարգացման նպատակների ինտեգրման, խթանման և քաղաքականության մշակման աջակցության պատվիրակները քննարկել են Հայաստանում մարդածին և բնական աղետներին դիմակայուն ու պատրաստված հասարակություն և համայնքներ ձևավորելու հարցերը:

Այսպիսի քննարկումների արդյունքում կմշակվի Հայաստանում կայուն զարգացման նպատակների ճանապարհային քարտեզը, որն էլ կդառնա դիմակայուն հասարակություն և համայնքներ ունենալու գործիք: Ճանապարհային քարտեզով կսահմանվեն նպատակներին հասնելու առաջնահերթությունները, քայլեր կարվեն հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարողությունների հզորացման ուղղությամբ, կլինեն փորձի փոխանակման ծրագրեր:

Դավիթ Տոնոյանը կարևորում է երկրի դիմակայունության մակարդակի բարձրացումը: Ըստ նրա՝ դիմակայուն հասարակությունը կայուն զարգացման գրավականն է:

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Հիդրոմետ, սեյսմիկ ծառայություն

Այս շաբաթ արտակարգ իրավիճակների նախարարությունում քննարկվեց երկու ստորաբաժանման արդիականացման հարցը. ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության և ղեկավար կազմի ու աշխատակիցների մասնակցությամբ՝ ծառայության արդիականացման, օպտիմալացման, կառուցվածքային փոփոխության և միջազգային համագործակցության հարցերը, իսկ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցության փորձագիտական պատվիրակության հետ՝ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» արդիականացման և կարողությունների զարգացման հարցերը:

Համաշխարհային բանկի փորձագետները նախ կուսումնասիրեն «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» կարիքները, ապա կկազմեն ծառայության արդիականացման ճանապարհային քարտեզ, որի օգնությամբ կլուծվեն ծառայության արդիականացման և թվայնացման խնդիրները:

Դավիթ Տոնոյանի կարծիքով, կարևոր է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» վաղ ազդարարման և կանխատեսումների ունակությունը: Միաժամանակ կանխատեսման շահառուները պետք է կարողանան օգտվել այդ կանխատեսումներից, տեղյակ լինեն թե որ դեպքում ինչ պետք է անել:

Իսկ սեյսմիկ պաշտպանության համակարգը արդիականացվելու է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա, օպտիմիզացվելու է կառավարման համակարգը, թվայնացվելու են դիտացանցերը: Սա նշանակում է ավելի քիչ ռեսուրսով առավել արդյունավետ աշխատանք: *«ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայությունը միջազգային համագործակցության գործընթացներում պետք է լինի նախաձեռնողի դերում, այլ ոչ թե սպասողի»*,- նկատեց Դավիթ Տոնոյանը:

Պաշտոնը զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու հիմքով աշխատանքից ազատվել է «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության պետ Հրաչյա Պետրոսյանը: Դավիթ Տոնոյանը վաստակաշատ աշխատակցին պարգևատրել է ԱԻՆ «Փառքի խաչ Նոյ» մեդալով և շնորհակալագրով: Հրաչյա Պետրոսյանը Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում աշխատում էր 1992 թվականից, ծառայության ղեկավարն էր 2011-ից: ■

Սկիզբը՝ նախորդ համարներում

ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գազերի փոխանակում և հավասար ճնշումների հարթություն

Հրդեհի վայրում գազերի փոխանակումը գազային զանգվածների շարժումն է տաք գազային ապրանքների այրման գոտուց դեպի մթնոլորտ և մթնոլորտային օդի դեպի այրման գոտի շարժման պատճառով:

Հրդեհի վայրում գազերի փոխանակման հիմնական և էական պարամետրերն են՝

- օդի կամ այրման ապրանքների շարժման արագությունը՝ գազերի փոխանակման արագություն,
- գազերի փոխանակման ինտենսիվությունը,
- ավելցուկ օդի գործակիցը:

Հրդեհները մարելու ժամանակ գազերի հոսքերի կառավարումը կարևոր օպերատիվ-մարտավարական գործողություն է, որի նպատակն է հրդեհների հաջող մարումը և փրկարարական աշխատանքների համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Այրման տաք արտադրանքը ռեակցիայի գոտում ունի ավելի պակաս խտություն, քան տարածք մտնող օդը, որի պատճառով այրման տաք արտադրանքը բարձրանում է վեր՝ ստեղծելով ավելորդ ճնշում: Շինության (սենյակի) ներքևի մասում օքսիդացման ռեակցիային մասնակցող թթվածնի ճնշման անկման հետևանքով ստեղծվում է նոսրացում: Շինության (սենյակի) ներսում այն բարձրությունը, որի վրա ճնշումը հավասար է արտաքին կամ հարևան սենյակի ճնշմանը, կոչվում է հավասար ճնշումների մակարդակ: Հասկանալի է, որ այդ մակարդակից բարձր տարածքը լցված է ծխով, իսկ ցածրում այրման ապրանքների կոնցենտրացիան չի խոչընդոտում մարտական ստորաբաժանումներին առանց շնչառական օրգանների պաշտպանության այդ գոտում գտնվելուն: Հավասար ճնշումների մակարդակով անցնող հարթությունը անվանում են հավասար ճնշումների հարթություն:

Շինության (սենյակի) ներսում հրդեհի ժամանակ գալիս է մի պահ, երբ հավասար ճնշումների հարթությունն իջնում է ցած: Որքան ցածր է հավասար ճնշումների հարթությունը, այնքան ավելի մեծ ծավալ է զբաղեցնում ծխապատված գոտին, առաջանում է այրման ապրանքների հարակից տարածքներ (սենյակներ) տարածման և նրանցում գազային խառնուրդի ջերմապարունակության հաշվին նոր հրդեհների օջախների ծագման վտանգ:

Հավասար ճնշումների հարթության իջեցումը կարող է տեղի ունենալ մարտական ստորաբաժանումների, օբյեկտի վարչակազմի սխալ գործողությունների հետևանքով: Օրինակ, ներհոսող և արտածծող որմնանցքների մակերեսների հարաբերակցության խախտման պատճառով, ինչը կարող է տեղի ունենալ ուժերի և միջոցների բացազատման և փողրակավարների դեպի այրման գոտի ներթափանցման ժամանակ:

Հրդեհների դեմ հաջող պայքարելու համար ստորաբաժանումները պետք է իմանան գազի հոսքերի կառավարման ուղիները:

Առաջին ճանապարհ. շենքի օդավարման (աերացիայի) կառավարում

Սրան կարելի է հասնել փոփոխելով ներհոսող և արտածծող որմնանցքների մակերեսները, այսինքն՝ բացելով կամ փակելով շենքում առկա պատուհանները ու դռները, պարսպող կառուցատարրերում բացելով անցքեր կամ փակելով առկա որմնացքները միջակապերով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ տարածքի (սենյակի) ներհոսող և արտածծող որմնանցքների մակերեսները պետք է ունենան որոշակի հարաբերակցություն: Հաստատված է, որ լավագույն հարաբերակցությունն այն է, երբ արտածծող որմնանցքների մակերեսը 1,5-2 անգամ գերազանցում է ներհոսող որմնանցքների մակերեսը:

Երկրորդ ճանապարհ. հարկադրական օդափոխման կիրառում

Սա հրշեջ ծխաքաշների (օդափոխիչներ) կիրառումն է ինչպես օդի մղման, այնպես էլ այրման արտադրանքի հեռացման համար:

Երրորդ ճանապարհ. կրակմարիչներ

Մարտական ստորաբաժանումները կիրառում են կրակմարող միջոցներ (օդամեխանիկական փրփուր, փոշիացված ջուր և այլն): ■

(շարունակելի)

Ավագ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ «Փրկարարական ամբիոնի» դասախոս

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Պարգևներ՝ անբասիր ծառայության համար

10 և 15 տարի անբասիր ծառայության համար մեդալներով են պարգևարվել ՀՀ ԱԻՆ ՓԾ Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի (ՀՆՓԱԻԿ) մի խումբ աշխատակիցներ: Կենտրոնի փրկարարների գերակշիռ մասն ունի միջազգային որակավորում և ընդգրկված է ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) ջոկատում: Պարգևները հանձնել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գնդապետ Մուշեղ Ղազարյանը:

ՀՈՒՆԻՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ամփոփել է 2017-ի հունիսի և առաջին կիսամյակի ընթացքում հանրապետությունում գրանցված արտակարգ դեպքերի ու պատահարների վիճակագրությունը:

Փրկարար ծառայության ստորաբաժանումները հունիս ամսին իրականացրել են 1910 ելք՝ 234-ով կամ 14 տոկսով ավելի, քան 2016-ի հունիսին: 653 ելքով փրկարարներն արձագանքել են արտակարգ դեպքերի, 762 դեպք՝ կենցաղային կանչ, 88 դեպք՝ կեղծ ահազանգ, 407-ն այլ դեպքեր: Արտակարգ դեպքերից զոհվել է 30 մարդ (այդ թվում՝ 8 կին), տուժել՝ 973 մարդ (այդ թվում՝ 262 կին և 155 երեխա): Փրկարարները 30 մարդու կյանք են փրկել: 2016-ի հունիսի համեմատ աճել է թե զոհերի, թե տուժածների, թե փրկվածների քանակը:

Հրդեհներ

Գրանցվել է հրդեհների առաջացման վերաբերյալ 510 ահազանգ (2016 թվականի հունիսին՝ 420 ահազանգ), հրդեհ է գրանցվել 313 դեպքում (2016 թվականի հունիսին՝ 308 դեպք): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հրդեհների քանակն աճել է 5-ով: 113 կեղծ ահազանգ է գրանցվել, 10 դեպքում էլ հսկողությամբ իրականացվող այրումը հրդեհի տեղ են ընդունել և զանգահարել 911: Հրդեհներից տուժել է 5 մարդ (2016-ի հունիսին՝ 1-ական զոհ և տուժած): Նյութական վնասը՝ մոտ 36 մլն դրամ՝ 11,7 մլն-ով պակաս, քան 2016-ի հունիսին: Առավելագույն նյութական վնաս գրանցվել է մայրաքաղաքում՝ 13,96 մլն դրամ: Մարզերից առավելապես տուժել է Կոտայքը՝ 9,3 մլն, ամենաքիչը՝ Վայոց ձորը՝ 170 հազար դրամ: Ամենաշատ հրդեհներ գրանցվել են բուսածածկ տարածքներում՝ 99: Սրանից բացի կրակի բաժին են դարձել աղբ՝ 66, առանձնատուն՝ 37, բնակելի շենք և տրանսպորտային միջոց՝ 31-ական, կրպակ-տնակ-ավտոտնակ՝ 9, պահեստավորված անասնակեր՝ 2 և այլն: Քաղաքներում գրանցվել է 236 հրդեհ, գյուղերում՝ 77: 2016-ի հունիսի համեմատ քաղաքային հրդեհների թվաքանակը նվազել է, գյուղական հրդեհներինն աճել: Երևանում գրանցվել է 183 հրդեհ: Մարզային քաղաքներից ամենաշատ հրդեհ եղել է Կոտայքի քաղաքներում՝ 12, ամենաքիչը՝ Տավուշի և Գեղարքունիքի քաղաքներում՝ մեկական: Հրդեհներից ամենաշատը տուժել են Կոտայքի գյուղերը՝ 18 դեպք, ամենաքիչը՝ Շիրակի գյուղերը՝ 2 դեպք:

Ճանապարհատրանսպորտային պատահար՝ ՃՏՊ

Գրանցվել է 353 ՃՏՊ՝ 64-ով ավելի, քան անցած տարվա հունիսին: Այս պատահարներից զոհվել է 20, տուժել՝ 473 մարդ: 2016 թվականի հունիսի համեմատ զոհերի և տուժածների թիվն աճել է: ՃՏՊ-ների մեծ մասը՝ 172, բախումներն են: 95 դեպք՝ վրաերթ, 40 դեպք՝ տրանսպորտային միջոցների շրջում, 46 դեպք՝ այլ բնույթի ՃՏՊ: Ամենաշատ դեպքեր գրանցվել են Երևանում՝ 158: Մարզերից ամենաշատը, Կոտայքում՝ 32, ամենաքիչը՝ Վայոց ձորում՝ 8:

Փլուզումներ

Հունիս ամսին հանրապետությունում գրանցվել է 15 փլուզում: Բարեբախտաբար, զոհեր և վիրավորներ չկան: Դեպքերի մեծ մասը՝ 10, գրանցվել է մայրաքաղաքում, երկու փլուզում՝ Շիրակի մարզում և մեկական՝ Գեղարքունիքում, Լոռիում, Սյունիքում: Փլուզվել են շենքեր և շինություններ, ավտո և երկաթգծի ճանապարհների ինժեներական կառույցներ և այլն:

Թունավորումներ

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 480 թունավորում, զոհվել է 5, տուժել՝ 491 մարդ: 2016-ի հունիսի համեմատ թունավորումների, զոհվածների և տուժածների թվաքանակն աճել է: Ամենաշատ թունավորումներ գրանցվել են մայրաքաղաքում՝ 327: Մարզերից ամենաշատ թունավորումներ եղել են Արմավիրում՝ 46 դեպք, ամենաքիչը՝ Սյունիքում՝ 2 և Վայոց ձորում՝ 3:

Թունավորումների հիմնական պատճառներն են. դեղորայք՝ 130, ալկոհոլ՝ 118, սողունների և միջատների խայթոց՝ 115, քիմիական նյութեր՝ 74, սնունդ՝ 38 և այլն:

Ուժեղ կարկուտ

2017-ի հունիսին գրանցվել է ուժեղ, վնասաբեր 15 կարկուտ: 5 դեպք Սյունիքում, 2-ական՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և 1 դեպք՝ Լոռու մարզերում: Վնասվել են բանջարաբոստանային մշակաբույսեր, գարու և ցորենի ցանքատարածքներ, պտղատու այգիներ և բազմամյա տնկարկներ՝ ընդհանուր հաշվով մոտ 746 հա: Վնասի գումարային չափն ավելի քան 5 մլրդ դրամ է:

Այլ դեպքեր

2017-ի հունիսին գրանցվել է մեկական պայթյուն, քարաթափում, սողանք, տեղատարափ անձրև, անասնահամաճարակ, երեքական ուժեղ քամի, հեղեղ, վայրի կենդանիների հարձակում և այլն:

Կիսամյակային ամփոփում

Այս տարվա առաջին կեսին գրանցվել է 6069 արտակարգ դեպք, պատահար, մեծ մասը՝ 3534 դեպք՝ տեխնածին: Բացի սրանցից, գրանցվել է նաև 2357 սոցիալ-կենսաբանական և 178 տարերային արտակարգ դեպք: Այս դեպքերից զոհվել է 149 մարդ, այդ թվում՝ 29 կին, 4 երեխա, տուժել 4866 մարդ, այդ թվում՝ 1465 կին, 825 երեխա: 2017-ի առաջին վեց ամսում փրկարարները 131 մարդու կյանք են փրկել: Ինչպես և նախորդ տարիներին, արտակարգ դեպքերի մեծ մասը՝ 5567, հրդեհները, ճանապարհատրանսպորտային պատահարները, թունավորումներն են: Զոհերի գերակշիռ մասը՝ 101 մարդ, ճանապարհատրանսպորտային պատահարներից է: ■

Հրապարակման պատրաստեց
Արամ ՁԱՔԱՐՅԱՆԸ

ԱՐԵԿԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՅՈՒՅՇ

Ճգնաժամային կառավարման ոլորտակադեմիայի գիտնականի առաջարկը

Առաջարկվող սարքը նորույթ է, գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում, որպես օգտակար մոդել, և հեղինակին տրվել է արտոնագիր՝ «Մելքոնյան Ա.Ս., Արտոնագիր N 339-Ս, «Արևային ջերմային կոլեկտոր», 15.03.2013»:

Սարքի մասին երկու անգամ զեկուցվել է այլընտրանքային վերականգնվող էներգիայի աղբյուրներին նվիրված միջազգային և երկու անգամ՝ հանրապետական գիտական կոնֆերանսներում: Ճկուն տարբերակը (նկ. 2, 3) նախատեսվում է կիրառել արտակարգ իրավիճակներում:

Նկ. 1. Կոշտ սարքի լուսանկարը

Սարքի կոշտ տարբերակը (նկ. 1) երեք տարվա փորձաշրջան է անցել և հաջողությամբ կիրառվում է բնակարաններում կենցաղային նպատակներով էկոլոգիապես մաքուր տաք ջուր ստանալու համար: Չափերն են՝ 130 սմX52 սմX12 սմ, զանգվածը՝ 22 կգ, տարողությունը՝ 37 լ:

Ճկուն տարբերակը բազմիցս փորձարկվել է ձմռանը՝ 23.10.2016-ից մինչև 24.02.2017-ը ընկած ժամանակահատվածում՝ շրջակա

Նկ. 2. Ճկուն սարքը ձմռանը փորձարկելիս

Նկ. 3. Սարքը՝ որպես պայուսակ

օդի -9°C-ից մինչև 13°C ջերմաստիճանի, փոփոխական ամպամածության և հորիզոնից Արեգակի ունեցած տարբեր բարձրությունների պայմաններում: Այդ ընթացքում արձանագրված կարևորագույն արդյունքներից է այն, որ, երբ փորձարկումներից մեկի ընթացքում շրջակա օդի ջերմաստիճանը երկու և կես ժամում բարձրացավ -9°C-ից մինչև -3°C, ջրի ջերմաստիճանը սարքում բարձրացավ 5°C-ից մինչև 83°C: Դրանից հետևում է, որ սկզբունքորեն հնարավոր է սարքը կիրառել նաև բնակարանների ու տարբեր կացարանների ջեռուցման նպատակով: Ամպամած եղանակին արված փորձարկման ընթացքում, երբ շրջակա օդի ջերմաստիճանը 8°C էր, ջուրը սարքում տաքացավ մինչև 38°C, ինչը բավարար է լոգանք ընդունելու համար: Համատարած ամպամածության պայմաններում սարքը գործում է ջերմոցային էֆեկտի հիման վրա, պարզապես կլանվող էներգիայի քանակի նվազման պատճառով շրջակա միջավայրի հետ սարքի ջերմային հավասարակշռության վիճակը տեղի է ունենում ավելի ցածր ջերմաստիճաններում:

Փորձարկումների արդյունքները մանրամասնորեն արձանագրված են, որոնցից մեկը գրաֆիկորեն պատկերված է նկ. 4-ում:

Ամռանը՝ շրջակա օդի 25°C-ից 35°C ջերմաստիճանի պայմաններում 11 լ ջուրը ճկուն սարքում 20-25 րոպեների ընթացքում տաքանում է մինչև 55°C, ինչը թույլ կտա 2 ժամում մեկ սարքով ընդարձակման բաքում կուտակել 30-35 լ տաք ջուր:



Նկ. 4. 05.11.2016-ին, ժամը 13:50-ից 16:20-ը կատարված փորձարկման արդյունքները

Բազմակողմանի հարմարավետության նկատառումներով պատրաստված կրովի ճկուն սարքի զանգվածը 12 կգ է, տարողությունը՝ 11 լ, լայնությունը՝ 90 սմ, երկարությունը՝ 120 սմ, հաստությունը՝ 6 սմ: Կարելի է պատրաստել ցանկացած տարողությամբ նմուշը կամ մի քանի կրովի սարքերը միացնել իրար՝ սարքի ցանկացած տարողությունն ապահովելու նպատակով:

Շատ կարևոր հանգամանք է սարքի ցածր ինքնարժեքը և այն պատրաստելու համար հատուկ արտադրական միջոցների ու հզորությունների անհրաժեշտ չլինելու փաստը: Սարքի կիրառության ոլորտները բազմազան են: Սարքը, հատկապես դրա ճկուն տարբերակը, նախատեսվում է արտակարգ իրավիճակներում ճամբարների կազմակերպման, դաշտային ելքերի, արշավների և, ընդհանրապես, այլ ավանդական էներգակիրների բացակայության պայմաններում կիրառելու համար: Դժվար է գերագնահատել նման սարքերի կիրառման կարևորությունը, օրինակ՝ ատոմային էլեկտրակայաններին կից բնակավայրերի բնակչության համար դաշտային բաղնիքի կառուցման, տարածքների, շենք-շինությունների, սարքերի ու տեխնիկայի դեզակտիվացիոն ու լվացման աշխատանքների կազմակերպման առումով:

Սարքի կիրառության կարևորագույն ոլորտներից են ՀՀ ԶՈՒ զորամասերը, հատկապես մարտական հենակետերը, որտեղ սարքը հասկանալի պատճառներով կարևորագույն միջոց կարող է հանդիսանալ, մասնավորաբար, անձնակազմի հիգիենայի ու կացարանների ջեռուցման խնդիրների լուծման համար:

Հայաստանի ամբողջ տարածքի համար պարզկա օրերի վիճակագրությունը շատ նպաստավոր է՝ սարքի օգտագործման արդյունավետության առումով: Սարքը էկոլոգիապես բացարձակ մաքուր է, կարող է օգտագործվել նաև սննդի պատրաստման ու կենցաղային այլ նպատակներով: ■

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ ՔՊ ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ., դոցենտ, ԶՈՒ պահեստազորի գնդապետ

911
Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Այդ վտանգավոր սնդիկը

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության աշխատակիցները «Նաիրիտ» գործարանում իրականացրել են հեղուկ սնդիկի (շուրջ 2 կգ 900 գ) հավաքման և Նուրբ օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի քիմիական պահեստ տեղափոխման գործողությունը: Սնդիկը գործարանում ժամանակին օգտագործվել է չափիչ սարքերի լիցքավորման համար: Սնդիկի կուտակման վայրը վարակազերծվել է:

ԱՌԿ
4

ՓՐԿԱՐԱՐԸ ՄԱՐԴՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ Է

Ուզում եմ աշխարհը խաղաղ տեսնել, առանց աղետների ու պատահարների

«54 տարեկան եմ, բայց 60 և ավելի տարիների աշխատանքային փորձ ու կենսագրություն ունեմ»,- ժպիտով ասում է Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, փ/ծ մայոր Հայրապետ Սարգսյանը: Ծնվել է հրշեջի ընտանիքում, հայրը՝ Խաչիկ Սարգսյանը, 1958-ից մինչև 1991 թվականը, 33 տարի աշխատել է Արտաշատի հրշեջ մասում, որպես ավագ վարորդ. *«Հասցրել եմ հորս հետ մի քանի տարի աշխատել նույն հրշեջ մասում»:* Իսկ որդին սովորում է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 2-րդ կուրսում: Ընտանիքում արդեն երրորդ սերունդն է, որ փոխարինում է փրկարար հորն ու պապին: Հիմա ծառայում է Հայոց բանակում: *«Փոքրերը տեսնելով մեծերի՝ ընտրում են իրեց ապագան, որովհետև երեխայի համար ամենաուժեղն իր ծնողն է»,*- աշխատանքային կենսագրությունն ու ընտանեկան ավանդույթն ամբողջացնելով ասում է վարչության պետի տեղակալը:

Այսօր արդեն փ/ծ մայոր Հայրապետ Սարգսյանը 1985-ին է աշխատանքի անցել Արտաշատի հրշեջ մասում. *«Այն ժամանակ քաղաքացիական էր աշխատանքը, պրոֆեսիոնալ հրշեջ մաս էր կոչվում, հետո անվանումը փոխվեց՝ դառնալով մասնագիտացված հրշեջ մաս: 1994-ին անցել եմ ծառայության արդեն որպես պետական հրդեհային հսկողության բաժանմունքի տեսուչ՝ ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում»:* Իսկ 2002-ի դեկտեմբերին, երբ համակարգում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ, մեկ տարի անց բացվեց Արարատի հրշեջ մասը՝ որպես առանձին միավոր, իսկ մինչ այդ համարվում էր Վեդու հրշեջ մասի հենակետ, որը սպասարկում էր միայն Արարատ քաղաքը, Սարգսյանը նշանակվեց նորաբաց հրշեջ մասի պետ. *«Սկզբում դժվար էր, շենքային պայմաններ չկային, ամեն ինչ նոր էր ձևավորվում, բայց ստացվեց, կազմակերպեցի ծառայությունը և 7 ամսվա ընթացքում կարողացա ամբողջովին կազմավորել Արարատի հրշեջ մասը»:* Արած աշխատանքը գնահատվում է, ինչի արդյունքում էլ արդեն 2004 թվականին նշանակվում է վարչության պետի տեղակալ:

Փ/ծ մայորն ու վարչության պետի տեղակալն իր երկարամյա ծառայության ընթացքում արժանացել է 10, 15 և 20 տարի անբասիր ծառայության համար երեք մեդալներին էլ: Իսկ Արտաշատում տեղակայված ՌԴ զորամասի կողմից «Գերազանցիկ սահմանապահ» մեդալն է շնորհվել փորձառու հրշեջին: *«2003 թե 2004 թվականն էր, սահմանին՝ ուղեկալներում, չոր խոտածածկ տարածք էր բռնկվել: Կրակը սպառնում էր ռուս սահմանապահների հատուկ զինարաքավորումներին: Կիլոմետրով այրվում էր տարածքը, անհնար էր հանգցնելը: Արագ կողմնորոշվելով՝ զինվորներին 10 մ հեռավորությամբ շարեցի, լուցկիներ բաժանեցի, ասելով՝ վառում եք այնպես, որ կրակը ետ չգա: Այդպես կրակը գնաց դեպի այրվող տարածք, և հրդեհն ինքն իրեն մարեց»,*- մեդալին արժանանալու առիթն է վերհիշում Սարգսյանը: Բացի դրանից, նրան շնորհվել է նաև «Անվեհեր փրկարար» և «Երկրապահ» մեդալները, արժանացել է բազմաթիվ շնորհակալագրերի ու պատվոգրերի:

Հրշեջ հոր՝ Խաչիկ Սարգսյանի ժամանակներից

Իսկ մինչև կհասցներ հրշեջի աշխատանքին նվիրվել, որ մանկությունից է ուղեկցել նրան, փ/ծ մայորը մասնագիտացել է նախ երաժշտության ասպարեզում. *«Երաժշտական կրթություն եմ ստացել, նվագել եմ փողային նվագախմբում, բանակում օրկեստրում եմ նվագել՝ բարիտոն, բայց տիրապետել եմ բոլոր փողային գործիքներին, որովհետև սիրում էի և հաճախ էի փոխարինում բացակա երաժիշտներին հենց նրանց գործիքներով: Նվագում եմ նաև ակորդեոն, դաշնամուր, սինթեզատոր: Երաժշտությունն ինձ հետ է եղել մինչև 1994 թվականը՝ ծառայության անցնելս: Երբ զինվորական համազգեստ հագա, թողեցի նաև նվագելը»:* Նույն թվականին փորձառու հրշեջն իր նախաձեռնությամբ երաժիշտ ընկերների հետ գնում է Արտաշատի ռուսական զորամաս, որն այդ ժամանակ նվագախումբ չուներ, հրամանատարին ասում, որ իրենք կարող են դառնալ զորամասի համար զինվորական նվագախումբ. *«Հրամանատարությունն ընդունեց առաջարկը, բայց ես աշխատում էի հրշեջ մասում, և ինձ առաջարկեցին սպայական կոչում, նաև տեսուչի աշխատանք: Ես կանգնած էի երկընտրանքի առաջ և ընտրեցի հրշեջի ծառայությունը, թերևս զորամասում նվագելու համար այդ ժամանակ ավելի բարձր էին վարձատրում: Իսկ ընկերներս շարունակեցին նվագել զորամասի նվագախմբում, նրանցից դեռ մինչ օրս էլ կան նվագողներ»:*

Անցած ճանապարհի հեռվից նայելով՝ վարչության պետի տեղակալը վստահ է, որ փրկարարը մարդու ամենամարդ տեսակն է. *«Հենց ադ փրկարարի հայացքով էլ ուզում եմ աշխարհը խաղաղ տեսնել, առանց աղետների ու պատահարների: Մարդիկ մշտապես մեկմեկու օգնեին, պետություններն էլ պատերազմելու փոխարեն անհրաժեշտության դեպքում միմյանց փոխօգնության հասնեին»:* Ու հիշում է մարդկային հոգին նրբացնող ու նաև ներաշխարհը տակնուվրա անող մի դեպք. *«Արտաշատի հրշեջ մասում էի աշխատում, գիշերային ահազանգ ստացանք. քաղաքի կապի զորամասում հրդեհ է: Երբ մեքենան հրշեջ մասից դուրս եկավ, արդեն հրդեհը երևաց, այնքան հզոր էր, որ երկինքը լուսավորվել էր: Զորամասի ներսում 70-80 մ երկարությամբ մի շինություն կար, որտեղ բարձրագույնն ավարտած ու սպայական դասընթացներ անցնող ուսանողներն էին մնում: Փայտաշեն շինություն էր, բռնկվել էր ու կրակը երկրորդ հարկին էր անցնում: Մինչև լուսաբաց հաջողվեց հրդեհը մեկուսացնել ու մարել: Շատ բան էր մոխրացել, բայց այրված երաժշտական գործիքներն էին, որ վառ տպավորվել են մեջս, չէ՞որ ինքս երաժիշտ եմ»:*

Այս համոզմունքն ու հայացքն ունի Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ, փ/ծ մայոր Հայրապետ Սարգսյանը: Իսկ գործընկերոջ մասին անմիջական ղեկավարը՝ վարչության պետ, փ/ծ գնդապետ Մուրադ Մարգարյանը, խոսում է հարգանքով ու բարձր գնահատում անցած ուղին, մարդկային բնորոշ հատկանիշները. *«Ծնվել է հրշեջի ընտանիքում, փոքր տարիքից տեսել է հոր աշխատանքը, հետո ինքն է դարձել հրշեջ, հիմա էլ որդին է փորձում շարունակել փրկարարի արդեն ընտանեկան ավանդույթ դարձած գործը: Սարգսյանն իր ծառայության ընթացքում քայլ առ քայլ հաջողություն ունենալով մշտապես գնահատվել է և հասել արդեն վարչության պետի տեղակալի պաշտոնին: Պատասխանատու անձնավորություն է, որի հետ կարելի է ծառայել, ճանապարհ գնալ, վստահել»:* ■

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԽՈՒՍՏՈՒՓԻ ՎՐԱՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Զանգեզուրի կենսոլորտային համալիրը, որն ընդգրկում է Սյունիքի մարզի հատուկ պահպանվող տարածքները՝ արգելավայրեր, արգելոց, ազգային պարկ, արդեն մի քանի օր է՝ էկոտուրիզմի սիրահարներին նոր արտադրանքով է ներկայանում: Կապանից 47 կմ հեռու գտնվող «Խուստուփ» վրանային ճամբարը պատրաստ է ընդունել զբոսաշրջիկների աշխարհի տարբեր ծայրերից: Այն ապահովված է վրաններով, քնապարկերով, լուսավորությամբ, սանհանգույցներով, խոհանոցով, որտեղ հյուրերը կարող են իրենց նախընտրած ուտելիքը պատրաստել, խորոված անել բնության գրկում, հավաքվել խարույկի շուրջը: Վերելք Խուստուփ լեռ, թեյի, սուրճի անվճար հյուրասիրություն, ուղեկցորդների տրամադրում, գիշերակացի հնարավորություն... Հովեկները բացի իրենց հետ վերցրած սննդից, հարկ եղած դեպքում կարող են օգտվել մոտակա Ծավ, Շիշկերտ, Ներքին Հանդ գյուղերի էկոլոգիապես մաքուր գյուղմթերքից: Բնամթերքի իրացման խնդիր ունեցող այս գյուղերում արդեն աշխուժություն է նկատվում...



Զբոսաշրջիկները կարող են օգտվել ինչպես Խուստուփի լեռնագագաթ տանող, այնպես էլ առաջարկվող այլ հետաքրքիր երթուղիներից, ձիերով, մեքենաներով բարձրանալ լեռները, քայլել ալպյան մարգագետիններով, շարժվել դեպի «Սոսու պուրակ» արգելավայրը՝ արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը, կենու, հաճարենու պուրակը, միջնադարյան եկեղեցիներ, կամուրջներ, հնարավոր է հանդիպեն նաև «Կարմիր գրքում» գրանցված բեզոարյան այծերի, վայրի հնդկահավերի և այլն: Ճամբարի կազմակերպիչները վստահեցնում են, որ հովեկները բացահայտելու շատ բան կունենան խորհրդավոր այս անկյուններում:

Տարբեր ժամանակներում 3201 մ բարձրություն ունեցող լեռը մշտապես գրավել է ինչպես տեղացիներին, այնպես էլ Կապան այցելած հյուրերին: Շատերի համար այն ուխտագնացության վայր է եղել, քանի որ այդտեղ են անթեղված զորավար Գարեգին Նժդեհի մասունքները: Դեռևս շատ հնում լեռը եղել է աղոթատեղի, ուխտավայր: Խուստուփի հարավարևմտյան լանջի քարանձավ-սրբատեղին Վարդավառի տոնին բազմաթիվ մարդիկ են այցելում, քարանձավի առաստաղից կաթող ջուրն ուխտավորները սուրբ ջուր են համարում, խմում են դրանից և տանում իրենց հետ՝ ցողելու արտերն ու դաշտերը:

«Վրանային ճամբարը հիմնելու նախաձեռնությունն իմն է, այն իրականացվել է պահպանվող տարածքների աջակցման ծրագրի շրջանակներում և մեր աշխատակիցների ուժերով: Նպատակ ենք ունեցել առավել ճանաչելի դարձնել Սյունիքի հարավը: Վրաններում մարդիկ կարող են գիշերել նույնիսկ տեղումնառատ օրերին, իսկ քնապարկերում՝ մինչև -5 աստիճան ցրտին»,- տեղեկացրեց «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Գևորգյանը: ՀՀ բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լևոն Պետրոսյանը, որը վրանային ճամբարի բացմանը ներկա էր, մեզ ասաց, որ վրանային ճամբարը հիմնվել է առանց բանապահպանական խախտումների:

Ծրագրի հաջողության դեպքում հետագայում նման ճամբարներ կհիմնվեն Մեղրու և Կապանի տարածաշրջանների մյուս պահպանվող գոտիներում: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Կապան

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Պատասխանատվություն

Ոչինչ չի կարող փոխարինել մարդկանց շնորհակալական խոսքին: Անկախ նրանից, թե ինչ կանչ ես սպասարկում, պատասխանատվությամբ ես մոտենում գործիդ: Նույնիսկ վերջերս ահազանգ էինք ստացել մի քաղաքացուց, որը խնդրել էր տուն մտած իշամեղվին բռնել, այդ կանչը ևս անարձագանք չթողեցինք:

Դրսևորում ուներ
5

ԿԱՊԱՆԻ ՔՈՓ ԹԻՄԸ

Որոնողափրկարարականի փորձառուները

Քաղաքային որոնողափրկարարական (ՔՈՓ) 5 թիմերից մեկը գտնվում է Կապանում, ստեղծվել է քաղաքի հրշեջ-փրկարարական ջոկատի բազայի հիման վրա: Ներքին որակավորման Սյունիքի, Տավուշի, Լոռու, Շիրակի և արտաքին որակավորման Երևանի թիմերը ձևավորվել են հատուկ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար: Առաջնորդվում են Որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդատվական խմբի (The International Search and Rescue Advisory Group՝ INSARAG) սահմանած չափանիշներով և ուղեցույցներով: Ինչպես մյուս թիմերը, Կապանի թիմը նույնպես հագեցած է ժամանակակից, նորագույն գույքով ու սարքավորումներով:

Կապանի որոնողափրկարարական թիմի գույքի համար նախատեսված պահեստում ենք. թիմի անդամները հերթով բացում են արկղերը, ոգևորությամբ թվարկում, թե ինչ լիարժեք միջոցներով են ապահովված. անհատական ուսապարկեր, համազգեստներ՝ ամառային-ձմեռային, քնապարկեր, պատգարակներ, անհատական պաշտպանության միջոցներ՝ սաղավարտ, ձեռնոցներ, ակնոցներ, արմնկակալներ, ծնկակալներ, կոշիկներ, հիդրավլիկ համակարգ: Աղետների ժամանակ՝ փլատակներում աշխատելու համար շատ կարևոր են նաև կտրող, ծակող և այլ սարքավորումները, տեսասարքերի և աուդիոսարքերի օգնությամբ էլ հնարավոր է նույնիսկ ամենափոքր անցքի միջոցով պարզել՝ փլատակների ներսում մարդիկ կա՞ն, թե՞ ոչ, և արագ արձագանքել տուժածներին: Թիմի անդամներն ապահովված են նաև առաջին բուժօգնության պարագաներով, սննդով, որը բավարար է յոթօրյա որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու ընթացքում: *«Մեզ հատկացված այս գույքն ու սարքավորումները հիմնականում օգտագործում ենք ուսումնավարժությունների ժամանակ: Թող երկրաշարժ և այլ աղետներ չլինեն, ու այս ամենը միշտ օգտագործենք վարժանքների ժամանակ»,-* ընդգծում են որոնողափրկարարական թիմի անդամները, որոնք պատրաստված են հատուկ փրկարարական աշխատանքներ իրականացնելու՝ ինչպես մարզի տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Կապանի ՔՈՓ թիմը բաղկացած է 47 հոգուց, որից 33-ը Կապանի



ՀՓՁ-ից են, անդամներ կան նաև Քաջարանի ՀՓՁ-ից, մարզային վարչության սպաներ, թիմում ընդգրկված են նաև բժիշկներ, մասնագետներ սեյսմիկ պաշտպանության ոլորտից և այլն: *«Տարեկան երկու անգամ 36-ժամյա իրական քաղաքային աղետի սցենարվարժանքների ենք մասնակցում, երեք տարին մեկ էլ քննություն հանձնում և ստանում որակավորում. մեր տղաները միշտ բարձր ցուցանիշներ են ապահովում: 25 հրշեջ-փրկարար ստացել է փրկարարի կարգ, մեկն էլ՝ երկրորդ կարգի փրկարարի կարգ»,-* նշեց որոնողափրկարարական թիմի անդամ Սասուն Գալստյանը:

Նա Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատի հին կադրերից է, այժմ երրորդ խմբի օղակի հրամանատարն է:

Կոչումով փ/ծ ավագ է, փրկարարական ծառայությունում աշխատանքի է անցել 2003-ից: 14 տարվա աշխատանքային տարիները խտացված են մեկ ակնթարթում, որոնց մաս են կազմում հաղթահարված դժվարությունները, փորձությունները, ձեռքբերումները և այլն: *«Կյանքի մեծ փորձ տվեց ինձ ծառայությունը, գուցե իմ ճակատագիրը հենց սա էր, երբևէ մտքովս չէր անցել, որ համազգեստ կկրեմ, այն էլ հպարտությամբ: Դա մի այլ զգացողություն է, դժվարանում եմ բացատրել, պետք է ծառայության մեջ լինես, որ հասկանաս: Եթե փրկարար ես, ապա փրկարար ես թե՛ տանը, թե՛ բակում, թե՛ աշխատավայրում, ամենուր: Փրկարարի գործը սահմաններ ու դժվարություններ չի ճանաչում... Երբ ավտովթարի վայրում միանգամից 6 զոհ ես տեսնում, ու այդ տեսարանը դեռ երկար ժամանակ հանգիստ չի տալիս քեզ, բայց գիտակցում ես, որ տվյալ պահին պետք է սառնասիրտ գտնվել, ընկերոջդ թև ու թիկունք լինել, դա իր հերթին մեծ խիզախություն է պահանջում»,-* ասում է ամեն տեսակի փորձությունների միջով անցած փ/ծ ավագ, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի շրջանավարտ Սասուն Գալստյանը, որի 4-ամյա որդին հոր համազգեստից հեռու չի գնում, շտապում է հասակ առնել ու նրա գործին անցնել:

Որոնողափրկարարական թիմի փրկարարներից և Կապանի ՀՓՁ-ի հնաբնակներից է նաև Արմեն Ասրյանը: Փրկարարի կյանքի ուղին բռնել է 2000-ից, սկսնակ հրշեջ էր, միայն սպասարկում էր հրդեհների կանչեր, այսօր արդեն դժվարանում է անթիվ տարաբնույթ դեպքերը թվել: Տարիներով կուտակած փորձն այսօր արդեն փ/ծ ավագին թույլ է տալիս երիտասարդ նորեկ կադրերի համար լավագույն փրկարարի օրինակ լինել: Գործընկերոջ պես նոր կադրերին վերապատրաստում, գործի մեջ արագ կողմնորոշվելու ու ճիշտ արձագանքելու կարևորագույն գաղտնիքներով կիսվում: Բազմաթիվ շնորհակալագրերի, պատվոգրերի են արժանացել, գնահատվել նաև մարզային, քաղաքային իշխանությունների, Քաջաթաղի շրջանի ղեկավարության կողմից, երբ մեկ ամիս շարունակ հերթապահել են ազատագրված տարածքների հրդեհված ցորենի արտերի տարածքում:

«Լավ է, որ գնահատում են արածդ, ոչինչ չի կարող փոխարինել մարդկանց շնորհակալական խոսքին: Անկախ նրանից, թե ինչ կանչ ես սպասարկում, պատասխանատվությամբ ես մոտենում գործիդ: Նույնիսկ վերջերս ահազանգ էինք ստացել մի քաղաքացուց, որը խնդրել էր տուն մտած իշամեղվին բռնել, այդ կանչը ևս անարձագանք չթողեցինք: Երբեմն փակ դռան ահազանգ ենք ստանում, գնում ենք տեսնում, որ տարեց պապիկը կամ տատիկը մուշ-մուշ քնած են, չես ուզում նույնիսկ արթնացնես, ուրախանում ես, որ վատ բան չի եղել»,- պատմում է փ/ծ ավագ Արմենը: Սասունի և Արմենի հետ մեր զրույցի ընթացքում լսեցինք տարատեսակ դեպքերի մասին՝ բարդ, զվարճալի և երբեմն տխուր վերջաբանով, որոնց սպասարկելու ընթացքում նաև փրկարարներն առանց վնասվածքների չեն մնացել: Արմեն Ասրյանը, որը կյանքի երիտասարդ տարիներից ի վեր իրեն նվիրել է Կապանի ՀՓՁ-ին, իր ներդրումն ունեցել ջոկատի կայացման գործում, այդպես էլ չի ամուսնացել:

«Ամուսնանալու ժամանակ չեմ ունեցել»,- կատակում է Արմենը և չի ուզում պատկերացնել իր կյանքն առանց ջոկատի, առանց ծառայության, առավել ևս չի ուզում մտածել, թե ինչպես է մի քանի տարի անց մեկնելու վաստակած հանգստի: Անմիջապես հետևում է ջոկատի հրամանատար Դավիթ Ասատրյանի պատասխանը.

«Մենք քեզ հանգստի անցնելու չենք թողնի»,- վստահ տոնով ասում է նրա հետ երկար ճանապարհի անցած հրամանատարը և շեշտում, որ Արմենի և Սասունի պես փորձառու կադրերը շատ անելիքներ ունեն, դեռ նոր փրկարար սերունդ պետք է կրթեն, իրենց փորձը փոխանցեն... ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Կապան

ՀԻՆԳԺԱՄՅԱ ՊԱՅՔԱՐ ԿՐԱԿԻ ԴԵՄ

Հուլիսի 20-ին ադրբեջանական դիրքերից գնդակոծության հետևանքով հրդեհ էր բռնվել Չինարի գյուղի բնակիչ Տիգրան Վանյանին պատկանող անասնաֆերմայում: Այն ծածկի հետ միասին հրդեհից փրկել չէր հաջողվել, այրվել էր նաև ձմռան համար պաշարած ողջ անասնակերը՝ ընդհանուր թվով 3000 հատ խոտի հակ: Կրակոցներից տուժել էր նաև կերաղացը, քարի հաստոցը, թրթուրավոր տրակտորի նստատեղը: Գյուղացիներին օգնելու և բռնկված հրդեհը մարելու նպատակով ահազանգ ստանալուց հետո անմիջապես դեպքի վայր է մեկնել հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը: Երբ դեպքի վայր են հասել, անասնաֆերման և խոտի հակերն արդեն կրակի ճարակ էին դարձել, սակայն հրդեհաշիջման աշխատանքների շնորհիվ հաջողվել էր կանխել կրակի տարածումը դեպի հարակից տներն ու անասնագոմը: Բերդի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ լեյտենանտ Վահագն Թադևոսյանը մեզ հետ զրույցում պատմեց, որ կրակի դեմ պայքարել են մոտ 5 ժամ, հրդեհը հաջողվել է մեկուսացնել գիշերը ժամը 2-ի սահմանում, մարել՝ մեկ ժամ հետո:

«Հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ուժեղ քամի էր բարձրացել, և ամեն րոպե կրակը կարող էր տարածվել հարևանությամբ գտնվող տների, անասուններով լի անասնագոմի վրա, սակայն կարողացանք փրկել կրակի ճիրաններից: Քամու հետևանքով միայն տրակտորը սկսեց այրվել, բայց արագ հասցրեցինք մարել, միայն նստատեղը վնասվեց: Մինչև ժամը 5-ը հերթապահել ենք Չինարիում, խոտը նորից շրջել, ջուր լցրել, որպեսզի հրդեհի նշույլ անգամ չմնա: Աշխատել ենք մթության մեջ, անվտանգությունից ելնելով՝ անջատել էինք փողոցի լուսավորությունը, քանի որ վտանգավոր էր աշխատել ադրբեջանական դիտակետի դիմաց: Ամբողջ ընթացքում մեզ հետ հավասար դեպքի վայրում աշխատում էին նաև Չինարիում տեղակայված քաղաքաշտպանության հենակետի փրկարարները»,- փոխանցեց Բերդի ՀՓՁ հրամանատարի տեղակալը:

Չինարիի համայնքի ղեկավար Սամվել Սաղոյանի խոսքով՝ վնասի չափը կազմում է 12 մլն դրամ: Վնասվել են նաև գյուղի տների, մանկապարտեզի և այլ շենք-շինությունների տանիքները: Գյուղապետը նաև հավելեց, որ վերջին օրերին լարվածություն չի նկատվում, սահմանագոտում հարաբերական անդորր է... ■

Մ. Ս.

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Արտակարգ ժամանակներ

Ուրեմն՝ այսպես. գրատախտակը կյանքն է, որը գրում ենք՝ ապրելով: Գրում ենք, որ փոխանցվի, ջանք ենք անում, որ չաղարտենք ո՛չ մեր, ո՛չ ուրիշի ապրելու տարածությունը, որովհետև արդեն գիտենք, որ ԱՄԵՆ ԻՆՉ ՄԻ ՏԵՂ ՄԻՇՏ ԿԱ, որ ոչինչ չի ջնջվում:

Ավագ ԵՓՐԵՄՅԱՆ

ԳԻՐ ԳՐԻ ՎՐԱ

Թվում է, թե ահագնացել են այն զրույցները, որոնք վերաբերում են ԳԻՏԵԼԻՔԻՆ: **Ի՞նչ է իմացել մարդը, երբևէ որևէ բան իմացել է, արդյոք, ի՞նչ գիտի այսօր, կարո՞ղ էր ավելին իմանալ, ի՞նչն է խանգարում իմանալուն, մարդուն իմացություն հարկավո՞ր է, ի՞նչ չափով է հարկավոր, ինքն անձա՞մբ է որոշում իր գիտելիքի չափը, թե՞ կան «հաստատություններ», որոնց «կոչումը» չափեր որոշելն է, անշուշտ, հանուն համընդհանուր բարօրության, ո՞րն է համընդհանուր բարօրությունը, ի սկզբանե եղե՞լ է, կա՞ այդպիսի բան:**

Ծանր պատմություն է: Թե ինչով կավարտվի, կամ գոնե՝ դեպի ո՞ւր է գնում, ոչ կանխատեսմամբ, ոչ գուշակությունով չի իմացվի (ահա՝ նորից իմացության հարց է), պետք է սպասել: Մտածելով, հասու պատկերներ համադրելով, երևի... «Անգործ» չմնալով:

Բնորոշն, իհարկե, գրատախտակի պատկերն է. գրում ես, ջնջոցով մաքրում և գրում ուրիշ բան, հետո՝ մեկ ուրիշը, հետո՝ հաջորդը:

Գրատախտակը ժամանակ առ ժամանակ նորից մաքուր է այդպիսով:

Սերնդի հարց է, ի դեպ, գրատախտակի պատկերը բերվեց իբրև մանկության հուշ, գուցե հիմա էլ կան գրատախտակներ, բայց տարբերությունն այն է, որ 40-50 տարի առաջ միայն դրա՛նք կային: Այսօր նման համեմատությամբ խոսք կառուցողը համակարգչի անունը պիտի տար: Գրատախտակից մինչև էկրան՝ մեծ փոփոխություն չէ, հատկապես, եթե խոսում ենք գրելու և ջնջելու մասին:

Ուրեմն՝ ի՞նչ է լինում, ի վերջո, մաքրված-ջնջված գրությունների հետ:

Ամենապարզ պատասխանը սա է. «Մնում են հիշողության մեջ»: Հենց հիշողության մեջ տեղափոխվելու համար էլ գրվում են: Եվ պարզ է, և ճիշտ: Բարդությունը ծնում է «ավելին» իմանալու, մանրամասնելու, խաղալիքը երեխայի նման քանդելու-քրքրելու ցանկությունը:

Համակարգիչն էլ իզուր չհիշեցինք. մի՞թե մարդու այդ նոր գործիքը ակնհայտորեն չի հուշում, որ ոչ մի ջնջել էլ գոյություն չունի. ԱՄԵՆ ԻՆՉ ՄԻ ՏԵՂ ՄԻՇՏ ԿԱ:

Միշտը հավերժն է, հավերժը՝ անմահը, իսկ Թումանյանին բոլորն են հիշում.

Մարդու գործն է միշտ անմահ...

Ի դեպ՝ որպես օրինակ՝ իրենը: Սակայն առանձնահատուկ դեպքերը չէ, որ այս զրույցում նկատի է առնվում: Խոսքը նաև սովորական մարդկանց մասին է, պայմանավորվելով, որ մարդու կյանքը ևս, կամ՝ հենց առաջին հերթին, գիր է որ կա:

Ի՞նչ պիտի պատահի, եթե այդպես մտածենք: Ոչինչ էլ չի պատահի, ընդհակառակը՝ մի քայլ էլ կմոտենանք իրական էությանն այն «խաղալիքի, որը քանդում» ենք:

Հետևյալը կարող է հեքիաթի նմանվել, բայց ի՞նչ վատ բան կա հեքիաթի մեջ, և մի՞թե արդեն հստակ հասկացել ենք՝ ո՞րն է «բուն իրականությունը»՝ հեքիա՞թը, թե՞ այն, ինչը կարելի է անվանել առօրյա՝ ամենալայն առումով:

Ուրեմն՝ այսպես. գրատախտակը կյանքն է, որը գրում ենք՝ ապրելով: Գրում ենք, որ փոխանցվի, ջանք ենք անում, որ չաղարտենք ո՛չ մեր, ո՛չ ուրիշի ապրելու տարածությունը, որովհետև արդեն գիտենք, որ ԱՄԵՆ ԻՆՉ ՄԻ ՏԵՂ ՄԻՇՏ ԿԱ, որ ոչինչ չի ջնջվում:

Ընդ որում՝ այս ամենը՝ առանց միստիկայի, առանց «կրոնական գիտակցության» ու, եթե կուզեք, զուտ «գիտական» տեսանկյունից, ինչպես սիրում ենք ասել... ■

ՓՈՐՁ



Չես ասի, թե ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆԸ վերաբերող այս կամ այն խնդիրը հանկարծակի առաջացավ տվյալ ժամանակի մեջ, բայց չես էլ կարող ժխտել, որ ուզածդ յուրաքանչյուր խնդիր գիտակցելի է միայն ներկա ժամանակում ապրողների համար:

Այնպես որ՝ երբ ասվում է, թե մարդիկ այսօր միմյանց լսել չեն սիրում, չպետք է առանձնապես սևեռվել ժամանակը ցույց տվող բառի վրա: Անիմաստ է: Կամ՝ իմաստն ուրիշ տեղ է:

Փորձենք այսպես մտածել. երբ չեն ուզում միմյանց լսել, խոսքի անունը դնում են «բարոյախոսություն», սկսում են դա ընկալել իբրև բացասական, կամ առնվազն՝ արգահատելի երանգներ ունեցող բան, քանզի հիշում են, երբեք չեն մոռանում, որ այլևս ազատ են, ինչն, ի վերջո, նշանակում է, որ մեկը մյուսի կարիքը չունեն, կամ՝ որ իրե՛նք կարող են ընտրել՝ ունե՞ն, թե՞ ոչ, և մեծավ մասամբ որոշում են, որ չունեն, կամ ունեն բացառապես այն ժամանակ, երբ դա միայն իրենց հարկավոր է...

Բայց ինչո՞ւ լիովին անփորձ լինել «ուրիշների» փորձի համեմատությամբ, ինչո՞ւ ***այդքան օտար լինել ուրիշներին,*** ինչո՞ւ միշտ զրոյից սկսել... ■

Ա. Ե.

ՎԱՆԱՀԱՅՐԸ՝ ՏԱԹԵՎԻ ՃՈՃՎՈՂ ԳԱՎԱԶԱՆԱՍՅԱՆ ՄԱՍԻՆ

Տաթևի վանական համալիրի բակում մինչև օրս կանգուն է 906-ին կառուցված ճոճվող գավազանասյունը, որը միջնադարյան հայկական ճարտարապետության յուրօրինակ կառույցներից է: Սուրբ Երրորդության անվան գավազանասյունը կառուցվել է հայոց կաթողիկոս, գրող, պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու գավազանի նմանությամբ: Այն ութանկյուն է, ունի 8 մ բարձրություն, իսկ գավազանագլուխն ամբողջանում է խաչքարով:

Կառուցված լինելով հոդակապային յուրահատուկ հանգույցի վրա՝ պատմական, հոգևոր մեծ արժեք ունեցող սյունն ի սկզբանե ճոճվելու հատկությամբ է օժտված եղել: Սյան ճոճվելու առանձնահատկության մասին կան տարբեր վարկածներ, ավանդույթներ:

Տաթև կատարած մեր այցելության ժամանակ փորձեցինք վանահորից, Հայր Միքայել վարդապետ Գևորգյանից լսել սյան կառուցման, դրա նշանակության և տարածված տեսակետների իրական և ոչ իրական լինելու մասին: *«Քանի որ Տաթևը Սյունիքի հոգևոր կենտրոնն է եղել, գավազանասյունն այստեղ հաստատվել է որպես հոգևոր իշխանության խորհրդանիշ, իբրև թե Տաթևն իշխում է ողջ Սյունիքի վրա, և տեղադրվել է վանքի բակում: Այն պարզ գավազանասյուն է, որից մենք ունենք բոլոր վարդապետանոցներում՝ Էջմիածնում, Օշականում, Որոտնավանքում, սակայն դրանցից ճոճվում է միայն այս մեկը: Տաթևի գավազանասյան առանձնահատկությունն այն է, որ ամենահինն է՝ 1111 տարվա պատմություն ունի: Ճոճվելու հետ կապված կան ավանդություններ, կրկնում եմ՝ դրանք ավանդություններ են, ըստ որոնց՝ սյունը հիմքից ճոճվել է թշնամու մոտալուտ հարձակումների ժամանակ՝ ձիերի ուժգին դոփյունից, ինչպես նաև երկրաշարժի ցնցումներից: Ավանդությունը պատմում է նաև, որ թեկնածուները վարդապետի աստիճան ստանալուց առաջ կանգնում էին Սուրբ Երրորդության անվան գավազանասյան մոտ և աղոթում, եթե այն ճոճվում էր, ուրեմն թեկնածուն արժանավոր էր»,-* նշեց վանահայրը:

Տաթևի գավազանասյան հետ կապված կա ևս մեկ տարածված տեսակետ, իբրև սյան կառուցման տեղը հատուկ է ընտրվել և ամեն տարի օգոստոսի 11-ին Օրիոն համաստեղության 3 աստղերն ուղղահայաց դիրքով հայտնվում են սյան գլխավերևում, ինչին ականատես լինելու համար հանրապետության տարբեր վայրերից մարդկանց հոծ խմբեր են այցելում այդ օրը: Հայր Միքայել վարդապետ Գևորգյանը քննադատում է այդ երևույթը և այն որակում որպես հեթանոս ժողովրդին բնորոշ արարք:

«Օգոստոսի 11-ին աննկարագրելի իրավիճակ է ստեղծվում մեզ մոտ. մարդկանց հոսքը ձգվում է կիլոմետրերով, նույնիսկ հիվանդներին են գրկած բերում հեռվից, իբրև թե երկնքից զորություններ պետք է իջնեն, կպնում են գավազանասյանը, քարեր են լցնում արանքը, որպեսզի երկնքից լիցքավորում ստանան...

Մենք այդ ամբողջ գիշեր տանջվում ենք, մեծ խմբով հերթապահում, բացատրական աշխատանքներ տանում, որ, ժողովուրդ ջան, չի կարելի այդպես, դուք հեթանոս չեք, աստղերը ի՞նչ պետք է անեն ձեզ, բայց անօգուտ է, մեր ժողովուրդը շոու շատ է սիրում: Չգիտեմ՝ ով է այս ամբողջ նախաձեռնության հեղինակը, որ նման փորձանք բերեց մեր խեղճ ժողովրդի գլխին»,- մտահոգված ասաց վանահայրը:

Նրա պատմելով՝ 1931 թվականին ավերիչ երկրաշարժ է եղել Սյունիքում, որի հետևանքով շատ վանքեր են քանդվել, գրեթե ամբողջությամբ վնասվել էին նաև Տաթևի վանական համալիրի բոլոր կառույցները, սակայն գավազանասյունն իր ճոճվելու հատկության շնորհիվ կանգուն է մնացել, որոշ չափով խախտվել է միայն հիմքը:

Այսօր արդեն գավազանասյունը ճոճվում է ոչ սկզբնական տատանման մեծությամբ՝ 30 սմ-ի փոխարեն արդեն 5 սմ թեքությամբ: Առաջիկայում նախատեսվում է ճոճվող սյունը վերանորոգել «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակներում, ներկայումս վանքի տարածքում ընթանում են Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու խցերի նորոգման աշխատանքները, որոնք շուտով ավարտին կհասցվեն: ■

Մերի ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Տաթև

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Բժշկի խորհուրդը

Կյանքդ արժանապատվորե՛ն ապրիր, պատվի, բարու, ազնվության, ջանասիրության օրենքներով, մարդկանց համար ինչ-որ բարի և պիտանի բան ստեղծելով: Մի՛ գողացիր և հիշի՛ր մահվան մասին, որպեսզի մահանաս հանգիստ, և որպեսզի շրջապատում տխրեն՝ լսելով քո անունը և բարի խոսքով հիշեն քեզ:

ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՄԱՏՈՒՆԻ

Խոսք հրաժեշտի

Անժամանակ ընդհատվեց ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս, բժիշկ-թերապևտ, գիտնական Գրիգորի Ամատունու երկրային կյանքը: Նա 61 տարեկան էր:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1973-ին Գրիգորի Ամատունին ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտ: Մասնագիտական գործունեությունն սկսել է 1980-1981 թվականներից՝ թե գործնական՝ աշխատելով Աշտարակի շտապ օգնության կայանում, թե գիտական՝ աշխատելով Երևանի բժշկական ինստիտուտ պրոպեդեվտիկայի, ապա թերապիայի ամբիոններում:

Բժիշկ Գրիգորի Ամատունին մշտապես առաջին գծում էր. 1988-ին մասնակցել է Սպիտակի երկրաշարժի փլատակներից տուժածների որոնման և փրկելու աշխատանքներին: Երկրաշարժը ցույց տվեց, որ Հայաստանի համար փրկարարական ծառայությունն ուղղակի օդուջրի պես անհրաժեշտություն է, ու երբ սկսվեց «Սպիտակ» փրկարարական ջոկատի ձևավորումը, նա առաջին գծում էր: Ջոկատը ստեղծվեց 1989-ին, շտաբի պետն էր, ապա ուսումնական բաժնի և բժշկական խմբի ղեկավարը: Երբ Երևանի բժշկական ինստիտուտում անցավ գիտական աշխատանքի, դրանից հետո էլ Ամատունու կապը ջոկատի հետ չէր կտրվել, կարողությունների ու հմտությունների զարգացման ծրագրերը նրա պարտադիր մասնակցությամբ էին իրականացվում:

Հետո արցախյան պատերազմ ու էլի առաջին գիծ. Երասխավան, Իջևան, Նոյեմբերյան, Ոսկեպար, Մարտակերտ, Քարվաճառ: Գնդակոծությունների և հակառակորդի հարձակման, մեր հակահարձակման ժամանակ բժիշկը զենքը ձեռքին զինվոր էր, իսկ համեմատաբար հանգիստ պահերին՝ ռազմական բժիշկ:

Բժիշկ-ազատամարտիկը բազում պարգևների է արժանացել. «Զորավար Անդրանիկ», «Դրաստամատ Կանայան»… Հրադադարից հետո էլ շարունակել է սովորել և սովորեցնել. մասնագիտական վերապատրաստման դասընթացների է մասնակցել Ֆրանսիայում, Հունգարիայում, Գերմանիայում, այլ երկրներում ու Հայաստանի գրեթե բոլոր մարզերում փրկարարների կարողությունների զարգացման ծրագրեր իրականացրել՝ աղետների բժշկություն և այլ թեմաներով:

2001-ից աշխատում էր նաև արտակարգ իրավիճակների վարչության ուսումնական կենտրոնում՝ որպես գլխավոր մասնագետ: Իսկ 2006-ից ճգնաժամային կառավարման պետակադեմիայում դասախոսում էր առաջին բուժօգնություն:

Հայաստանն այսօր ունի Որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդատվական խմբի (The International Search and Rescue Advisory Group՝ INSARAG) չափանիշներին համապատասխանող հինգ թիմ: Այս թիմերի վարժանքների սցենարների բուժօգնության հատվածի մշակումը և ղեկավարումը Գրիգորի Ամատունու պարտադիր մասնակցությամբ էր: Եվ ընդհանրապես, Հայաստանի փրկարարների ցանկացած վարժանքի պլանի առաջին բուժօգնության բաղադրիչը Գրիգորի Ամատունու ձեռքով պիտի անցներ:

Գիտնական էր յուրահատուկ աշխարհայացքով: Առաջնորդվում էր դրանով և ճգնաժամային կառավարման պետակադեմիայում էլ առաջին բուժօգնության դասերը վարում էր յուրահատուկ մոտեցմամբ՝ մի վախեցիր չիմանալուց, վախեցիր սխալ իմանալուց, քանի որ, ըստ նրա, դրանից է ամբողջ աշխարհի չարիքը:

Ակադեմիայում բոլորը նրան բժիշկ էին կոչում: Քար լռություն էր նրա դասերին: Գրառվում էր նրա յուրաքանչյուր խոսքը, լարված հետևում էին ձեռքերի շարժումներին, երբ ցուցադրում էր տուժածին զննելու բուժկարգակարգները:

Բժշկագիտության զգայուն ու սուր հարցերին, կյանքի ու մահվան մասին ուներ իր պատասխանները: Ահա դրանցից մի քանիսը՝

Անբուժելի հիվանդ երեխաների նկատմամբ էվթանազիան թույլատրող օրենքի մասին.

Ես դեմ եմ այդ օրենքին: Հիպոկրատի երդումից. *«Ես չեմ տա մահաբեր դեղորայք ինձանից այն խնդրողին և մատնացույց չեմ անի նման մտահաղացման իրագործման ճանապարհը: Նույն կերպ էլ ոչ մի կնոջ վիժեցնող հաբեր չեմ հանձնի»:*



Երեխան իրավունք չունի որոշել. նա ինքնուրույն չի եկել այս աշխարհ, և նա չպիտի որոշի, թե ինչպես վարվի իրեն նվիրված կյանքի հետ, քանի որ նա դեռ հիմար է և գրեթե չի ճանաչում կյանքը: Եթե, իհարկե, նա հոգեպես առողջ է:

Կլոնավորման և սեփական պատճեն ունենալու մասին.

Ես դեմ եմ կլոնավորմանը: Միայն սիրով և բնական ճանապարհով ծնված երեխաները հոգի ունեն, ունակ են բարի զգացմունքներ և հարուստ հույզեր ապրել:

Մահվան դեպքում օրգանների դոնոր դառնալու մասին.

Բացասաբար եմ վերաբերվում: Մարդն օրգանի փոխպատվաստումից հետո հաշմանդամ է դառնում և ուղղակի գոյատևում է՝ ապրելով իմունոդեպրեսանտների վրա, դա կյանք չէ: Փոխպատվաստումը թույլատրելի է միայն միաբջիջ երկվորյակների դեպքում:

Հղիության արհեստական ընդհատումների մասին.

Դեմ եմ: Ելնելով նույն այդ Հիպոկրատի երդումից: Պետք է հիշել, որ արդեն երրորդ շաբաթվանից սկսած՝ պտուղն ուղեղ ունի: Բացի դրանից, կանայք աբորտից հետո երկար ժամանակ լացի ձայն և չծնված երեխայի կշտամբանքն են լսում: Անգամ ծերունական տկարամտության վիճակում փնտրում ու սպասում են նրան:

Խորհուրդ կյանք մտնողին.

Կյանքդ արժանապատվորե՛ն ապրիր, պատվի, բարու, ազնվության, ջանասիրության օրենքներով, մարդկանց համար ինչ-որ բարի և պիտանի բան ստեղծելով: Մի՛ գողացիր և հիշի՛ր մահվան մասին, որպեսզի մահանաս հանգիստ, և որպեսզի շրջապատում տխրեն՝ լսելով քո անունը և բարի խոսքով հիշեն քեզ:

Մահվան վախի և հավերժ կյանքի մասին.

Չեմ վախենում, արդեն տեսել եմ այն: Անմահություն չեմ ուզում: Ձանձրալի է այդքան երկար ապրել, բացի դրանից, այդքան անելիք էլ չկա:

Այս տարվա հունվարին News.am-ի հետ զրույցում ասել էր բժիշկ Ամատունին: Կանխազգացե՞լ էր անսպասելի մոտալուտ մահը: Դժվար: Որովհետև անելիք շատ ուներ: Նա ամեն օր կյանք էր պարգևում:

Բժիշկ Գրիգոր Ամատունու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում: Ծանր կորստին մի մխիթարանք կա. թավ բեղ ու մորուսով, հեքիաթային բարությամբ ու անզուգական ժպիտով բժիշկ Ամատունու դասերն օգնում են բոլորին…

Հանգչիր խաղաղությամբ, ԲԺԻՇԿ:

Մի բարձի ծերանաք

Նշանակությունը

Պետրոս Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» այս բարեմաղթանքի բացատրությունը սա է՝ «Մինչև օր ծերություն անբաժան կյանք վարել» (էջ 230):

Գրաբարում «բարձ»-ի իմաստներից մեկը՝ «Նստարան բարձր կամ պատուաւոր՝ ի կոչունսգ բազմոցգ գահ» (Նոր բառագիրք հայկազեան լեզուի):

Ստեփանոս Օրբելյանը գրում է. «...Վաղարշակ թագավորը Բագրատունիներին առաջարկում է թագադիր լինել ու նրանց անվանում է ասպետներ, շնորհում է գրավել առաջնակարգ ԲԱՐՁ՝ բոլորից վերև» («Պատմութիւն տանն Սիսական» էջ 73):

Այսպիսով, «Մի բարձի ծերանաք» արտահայտությունը նշանակում է «ՄԻ ԳԱՀԻ ԲԱՁՄԱԾ՝ ԾԵՐԱՆԱՔ»: Իսկ ինչո՞ւ հատկապես «գահի»: Որովհետև հարսանիքի ծեսի ողջ ընթացքում փեսան կոչվում է «ԹԱԳԱՎՈՐ», իսկ հարսը՝ «ԹԱԳՈՒՀԻ»:

Տիգրան ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Արմավիրի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության հաշվառման, վերլուծության և քարոզչության բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 21-4.2-8)

Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ մասնակցում է օրենքով սահմանված կարգով տարածաշրջանում հրդեհների, տեխնածին վթարների, արտադրական դժբախտ դեպքերի հաշվառման, վերլուծության աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է տնտեսության օբյեկտներում և բնակավայրերում հրդեհային և տեխնիկական իրավիճակի հետ կապված վերլուծությունների հիման վրա աշխատանքային պլանների մշակման աշխատանքներին: Մասնակցում է քարոզչական պլակատների, բացիկների, ալբոմների պատրաստման ու տարածման, ցուցափեղկերի, պատուհանների և անկյունների սարքավորման ու ցուցադրման, բնակչությանը հրդեհային անվտանգության կանոնների ուսուցման աշխատանքներին: Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

• առնվազն միջնակարգ կրթություն,

• սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

• գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

• կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

• աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում),

• քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը,

• մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,

• անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 4.08.2017 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմին **(ք. Երևան, Դավիթաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-78-65):**

911 Արտակարգ թերթ
N 29 (677)
28 հուլիսի - 24 օգոստոսի, 2017

Ուշադրություն

Հուլիսի 28-30-ը սպասվում է բարձր ջերմային ֆոն. Երևանում, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում ցերեկը կանխատեսվում է մինչև 38...40 աստիճան տաքություն և բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակ: Օդի միջին օրական ջերմաստիճանն այդ օրերին բարձր կլինի նորմայից 4-6 աստիճանով: Ուլտրամանուշակագույն ճառագայթման ինդեքսը կանխատեսվում է 6, որի դեպքում խորհուրդ է տրվում ժամը 11-15-ն ընկած ժամանակահատվածում խուսափել արեգակի ուղիղ ճառագայթներից:

Եղանակ 8

Օգնում են փրկարարները

Աջափնյակում 5 մետրանոց օձ է հայտնաբերվել

Անցած յոթ օրում ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ մոտ 600 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիաջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է մոտ 150 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պտղատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 130 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաքաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Արաբկիր, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ, Աջափնյակ, Էրեբունի վարչական շրջանների և Արարատի փրկարարները:

Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 30 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվտանգ տարածք: Գետերի և ջրամբարների ափերին արգելափակված մեքենաներն են դուրս բերվել երթևեկելի հատված: Բարձր ջերմաստիճանով պայմանավորված դեռ շատ են բուսածածկ տարածքների հրդեհները: Այս շաբաթ բուսածածկ տարածքների խոշոր հրդեհներ են գրանցվել Սյունիքի մարզի Դիցմայրի գյուղում՝ 25 հեկտար, Կոռնիձոր գյուղում՝ 15 հա, Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասում՝ 10 հա, Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի մատույցներում տարբեր օրերի՝ 15 հա, 4 հա, Ջորաղբյուր գյուղում՝ 4 հա, Երևանում ավտոճանապարհի 15 կմ-ի մոտ՝ 80 հա, Արագածոտնի մարզի Օշական գյուղում՝ 6 հա խաղողի այգի, Ուջան գյուղում՝ 5 հա, Տավուշի Կողբ գյուղում՝ 10 հա և այլն:

Այլ կանչեր. Աջափնյակի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Մարգարյան փողոցի բակերից մեկում բնակիչներն օձ են բռնել: Պարզվել է՝ օձը մոտ 5 մետրանոց պիթոն է: Հրշեջ-փրկարարները օձին տեղափոխել են անվտանգ տարածք: Ավանի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Ծարավ Աղբյուր փողոցի բակերից մեկում, շենքի 7-րդ հարկից պայուսակն ընկել է 3-րդ հարկի պատշգամբի ծածկի վրա: Փրկարարներն իջեցրել են պայուսակը: Քանաքեռ-Զեյթունի փրկարարները գիշերն ահազանգ են ստացել, թե Ահարոնյան փողոցի բնակիչներից մեկի մատանին մատից դուրս չի գալիս: Փրկարարները մատանին հանել են 45-ամյա կնոջ մատից:

Արագածոտնի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Օշական գյուղում վիրավոր արագիլ կա: Փրկարարներն արագիլին տեղափոխել են կենդանաբանական այգի: Արմավիրի փրկարարներն էլ Գայ և Ջանֆիդա գյուղերում ընկած վիրավոր արագիլներին են տեղափոխել կենդանաբական այգի:

Շիրակի փրկարարներն ահազանգ են ստացել, թե Ամասիա գյուղում խոշոր եղջերավոր անասունն ընկել է փոսը: Հրշեջ-փրկարարները փոսից հանել են խոշոր եղջերավոր անասունին և հանձնել տիրոջը: ■

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
www.cmsa.am

Հասցե. Երևան, Ավան, Աճառյան 1
Հեռ. (060) 69-10-01 (ռեկտոր)
(060) 69-10-03, (060) 69-10-05
(060) 69-10-06, (060) 69-10-13

ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան իրականացնում է.
1. *բակալավրի կրթական ծրագիր առկա ու հեռակա ուսուցմամբ,*
2. *մագիստրոսի կրթական ծրագիր միայն հեռակա ուսուցմամբ,*
3. *միջին մասնագիտական կրթական ծրագիր:*

Ընդունելությունը.
- **Բակալավրիատում՝**
- *Հայոց լեզու (թելադրություն)*
- **Մագիստրատուրայում՝** *հարցազրույց:*

Մասնագիտություններ	Վարձը (հազ. դր.) առկա	Վարձը (հազ. դր.) հեռակա
Բակալավրի կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	Անվճար	240
Փրկարարական գործ	Անվճար	240
Ճգնաժամային կառավարում	320	260
Կառավարում	320	260
Քաղաքացիական պաշտպանություն	300	240
Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում	300	240
Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում	300	240
Հրդեհային անվտանգություն	300	-
Մագիստրոսի կրթական ծրագիր		
Փրկարարական գործ	-	320
Ճգնաժամային կառավարում	-	320
Կիրառական սեյսմոլոգիա	-	320
Միջին մասնագիտական կրթական ծրագիր		
Հրդեհային պաշտպանություն	150 90*	-
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	150 90*	-
Կառավարում արտակարգ իրավիճակներում	150 90*	-

Ծանոթություն.
****Նշված վճարով ուսուցումն իրականացվում է Ստեփանավան քաղաքում:***

Միջին մասնագիտական կրթական ծրագրով գերազանց և լավ գնահատականներով շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների ուսումը շարունակել ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրով 2-րդ կուրսում:

ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ

Կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 434-Ն որոշմամբ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային հատկացվել է 60 անվճար տեղ առկա ուսուցմամբ «Հրդեհային պաշտպանություն» և «Փրկարարական գործ» մասնագիտությունների գծով, որից 5-ը տրամադրվել է Արցախի Հանրապետությանը:

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Վարակներ. արյան միջոցով փոխանցվող. հեպատիտ B

Հեպատիտ B-ն վիրուսային վարակ է, որ ախտահարում-բորբոքում է լյարդը: Հիվանդության հիմնական նշանը՝ մաշկի և լորձաթաղանթների դեղին գունավորում: Վիրուսը փոխանցվում է արյան միջոցով, այսինքն՝ կանխարգելիչ միջոցառումների չպահպանման դեպքում: Մյուս հիմնական ուղին սեռականն է:

Նշանները. գլխացավ, հոգնածություն, ախորժակի անկում, մարմնի ջերմաստիճանի բարձրացում, անգինա, հոդացավեր, մաշկի ցանավորում: Գաղտնի շրջանը՝ 3-6 ամիս: Նշանների ի հայտ գալուց 1-2 շաբաթ հետո սկսվում է դեղնուկի շրջանը. մաշկի, տեսանելի լորձաթաղանթների, մասնավորապես՝ աչքի սպիտակուցային թաղանթի դեղնություն, մեզի զգալի մգացում, կղանքի անգունացում, ցավեր որովայնում, հատկապես աջ ենթակողում, սրտխառնոց, մարսողության խանգարումներ: Հիվանդությունը ժամանակին չբուժելու դեպքում գրեթե միշտ մնում են մնացորդային լուրջ երևույթներ՝ լյարդի քրոնիկական բորբոքում և այլն:

Հեպատիտ B-ի կանխարգելման քայլերը նույնն են, ինչ՝ ՄԻԱՎ վարակի դեպքում. սեռական հարաբերությունների ժամանակ օգտագործել պահպանակ, սահմանափակել սեռական շփման զուգընկերների թիվը, ունենալ մեկ հուսալի զուգընկեր, խուսափել պատահական սեռական կապերից, ներարկումների համար օգտագործել միանգամյա ներարկիչ: ■

Մեր թերթի «նավարկությունը» երեք շաբաթով ընդհատվում է... մինչև օգոստոսի 25-ը: Հաջորդ համարը լույս կտեսնի ճիշտ այդ օրը:

Լուսանկարը՝ «Լոռէ» փրկարարական ջոկատի

911 Արտակարգ թերթ
ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շաբաթաթերթ

Հրատարակիչ՝ **ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ**
Գրանցման վկայական՝
03Ա061283, 24.08.2005

Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ԵՂՅԱՆ
Համարի պատասխանատու՝
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նյութերը չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս հղումը թերթին պարտադիր է:
Տպագրված է ԱՁ «Արման Ասմանգուլյան» տպագրատանը.
Երևան, Հրաչյա Ներսիսյան, 1, 125
Ծավալը՝ 2 պայմ. տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 27.07.2017:
Տպաքանակ՝ 3403: Պատվեր՝ 29
Հասցե՝ Երևան, Աճառյան 1
էլ փոստ՝ artakarg.tert@gmail.com, info@911tert.am
Կայք՝ www.mes.am, www.911tert.am
Հեռ.՝ 060 691 000 (501, 502)
Գինը՝ 140 դրամ:

©
Գլխագիրը՝
Արտակ Բաղդասարյանի

Գլխագրի և վերնագրային տառատեսակները՝
Մկրտիչ Մաթևոսյանի